317.- 1784.— Այս է տապան հանգստեան *ՄԱՇԿԵՐՏՑԻ ՋԱՔԼ ՊՕՂՈՍԻՆ* որ հանգեաւ ի Քս. ՌՃՃՓ (1784):

318.- 1785.— Այս է տապան *ՊՕՂՈՍԻ* որդի *ՏԻՐԱՑՈՒ ՄԵԼՔՈՆԻՆ*. ՌՄԼԴ (1785):

319.- 1785.— Այս է տապան *ՄԱՇԿԵՐՏՑԻ* հանգուցեալ *ՍԱՑԻ ՓԻԼՈՒՑ* (*յարդ կ'ապրին այս ընտանիքէն Հալէպի մէջ*) *ՄԱՆԿԱՍԱՐԻ* որդի *ՏԻՐԱՑՈՒ ՍՏԵՓԱՆԻՆ* որ հանգեաւ թվին ՌՄԼԴ (1785)ին:

320.- 1786.— Այս է տապան հանգստեան *ԿՈՒՌՆՑԻ ԹԷՐՃԱՆԵՆՑ ԱՐՈՒԹԻ* կողակից *ՄԱՐԻԱՄԻ ՍԱՒՈՒԼԵԱՆՑ* գոչեցեալն որ հանգեալ է ի պանդխստութեան օտար յերկրի ամի Տն 1786 ի սեպտեմբերի ժբ. յաւուր շաբաթու ի տօնի ամենափառաւոր Նաւակատեաց սբյ Խաչի. որոյ Տր ողորմեսցի: 1786 (*արաբերէն*):



Դամբարան Կիւրիւնցի Թէրճանենց Արուրի կողակից Մարիամի (թիւ 320)

321.- 1786.— *ՄԱՇԿԵՐՏՑԻ ՏՐ ԳՐԻԳՈՐԻ* որդի *ՍԱՐԳԻՍ* որ եւ հանգեաւ ի Քս. թվին ՌՄԼԵ (1786)ին:

322.- 1787.— Այս է շիրիմ *ԱՐԵՒԵԼՑԻ* ի քաղաքեն...*ՄՀՍԻ ԱԲՐԱՀԱՄԻ* որդի... սիրելի *ԳԱԲՐԻԷԼԻՆ* եւ քոջը *ՆԱԶԼՈՒԽԱՆԻՆ* որք? հանգեան ամսուն? դկտի? թվին ՌՄԻԶ (1787):

323.- 1788.— Այս է տապան հանգիստեան *ԽՕՇԿԲԱՑՇԷՆՑԻ ՄԱՐՔԱՐԻ* որդուն *ՏՕՆԻ* որ հանգեաւ ասսի կենաց...թվական Քրկչին ՌՄԻԸ (1788). Յունվարի իզ. եղին զիսի տապան... (*բան մը չի կարդացուիր*) օտար:

324.- 1788.— Այս է տ(ա)պան հ(ա)նգստեան *ՍԱՄՆՑԻ ՏՕՆՕՒ* որդի *ՄԱՆԱՇԻՆ*? որ հ(ա)նգեաւ ի Քս. թվին 1237 (1788) (Յ)ուլիսի. ժե. ին:

325.- 1788.— Այս է տպն հնգստեն *ԿԵՍԱՐԱՑԻ ԿՈՍՏ(Ա)ՆԻՆ* որ հ(ա)նգեաւ ի Քս. թվն 1237 (1788):

326.- 1791.— Այս է տապան հանգստեան *ԱՐԵՒԵԼՑԻ ԱԶԱՐԵԱՆՑ ԱԴԱՄՃԱՆԻ* որդի *ԱԶԱՐԻԱԻՆ* որ հանգեաւ ի Քս. ՌՄԽ (1791) թվին:

327.- 1791.— Այս է տապան հանգստեան *ՄԱՇԿԵՐՏՑԻ ԱԲԵԿԱՑ ՊՕՂՈՍԻ* որդի *ՓԻԼԻՊՈՍԻՆ* որ հանգեաւ ի Քս. ՌՄԽ (1791) Ապրիլի Է. ին: